

STROPPEL SURGUL



RE-BLUELED
S. L. L.

891.99

9-39

19 NOV 2011

Կ Ա Ր Մ Ւ Ր Ֆ Ի Լ Ե Ր Ա - Ի
Գ Ր Ա Դ Ա Ս Ա Ն

2 ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 2

199 աշ

- 39

ՈՈՒՐԳԵՆ ԶԱՐՅԱՆ

ՀՅԱՐԱՆԻ
ՏՂԱՆ

ՀԱՊԵԿՐ և ԻԼՈՒՍՏՐԱԳՐԻԱՆ
ԳՈՒՐԳԵՆ ՄԱԼՅԱՆԻ



1932

ԹԻՖԼԻՍ

12.04.2013

29496

ԹԵՅԱՐԱՆԻ ՏՂԱՆ

A black and white illustration of a bust of a man with a laurel wreath on his head, holding a sword in his right hand.



Տպարան Պոլիգրաֆդպրոցի

Questa, 15

Гришк, 2339

m. 1000

Ճիշտ ե, տարիներ են գլուխել այդ որերի վրայով՝
ճիշտ ե, շատ զեպքեր ու արկածներ են հիշողությու-
նից չնջվել, սակայն մի զեպք, վորի մասին ուզում եմ
ձեզ պատմել, չեմ մոռացել, լավ հիշում եմ — կարծես
թե այսոր ե պատահել:

* *

Մեր ճամբարը տեղավորվել եր առւլից վոչ այնքան
հեռու: Քըչքըչան մի գետակ մեզ իրարից բաժանում եր,
իսկ գետակի վրա ձգված փայտաշեն մի կամրջակ
հնարավորություն եր տալիս կապվելու:

Ուշ յերեկոյով, յերբ բոլորը քուն եյին մտնում, մի-
այն պահակներս եյինք արթուն մնում, առւլից գալիս
եր մի տղա, նստում եր խարույկի մոտ ու լուսացնում
մեզ հետ վողջ գիշերը: Յես սիրեցի այդ տղային ու
ինչ-վոր հարազատություն զգացի գեափի նա:

Այդ տղան Քյարամն եր, փոքրիկ Քյարամը, հազիվ
տասներկու գարուն բոլորած, հազիվ մի թմբի բոյ քաշած:
Քյարամը ժպտուն աչքեր ուներ, վորոնք այնքան սրտա-
հույզ նայում եյին ինձ ամեն անգամ հանդիպելիս:

Մի քանի որ Քյարամը չերևաց: Թե ինչու չեր գալիս,
մեղանից վոչ վոք չգիտեր: Քյարամի բացակայությունն
զգալի յեր մեզ համար, ու յես այնքան եյի կապվել նրա
հետ, վոր ձանձրույթ եյի զգում և մինչեւ անգամ տիսրում
եյի առանց նրան:

* *

Ուշ գիշեր եր. բոլորը քնել եյին. միայն յես եյի
արթուն: Խարույկն ահապամուկ ծիում եր, իսկ յես մեջքիս
վրա պառկած դիտում ելի յերկինքը: Ուզում եյի հաշվի
առնել յերկինակամարի վրա յեղած աստղերը, բայց չեյի
կարողանում, հետո նայում եյի ամպի կտորներին, վո-
րոնք միանալով ուզուի կերպարանք եյին ստացել:

Ինչ-վոր խշոց լսվեց. վեր թուա: Նայեցի շուրջու.
վոչ վոք չկար. յենթաղրեցի, վոր քամին ե, նորից պառկե-
ցի: Մի բոպե չսնցած՝ վերստինսլիցնույն ձայնը, բայց ա
վելի մոտիկից: Նայում եմ, ինչ-վոր ստվեր կպել ե ծառին:

— Ո՞վ ե:

Բարկացկոտ ձայնով հարցնում եմ յես ու լապտերը
ձեռքեւ մոտենում պարզելու, թե գիշերվա կեսին ինչ
գործ ունի անձանոթը ձամբարի մոտ: Տեսնեմ Քյարամն
ե, նայում ե ինձ ու աչքերը թրջվում են: Գրկում եմ
նրան, շոյում նրա գանգրահեր զլուխը և ուզում եմ
իմանալ, թե ինչու յե լալիս, իսկ նա զլուխը թագը-
նում ե թևերիս մեջ ու շարունակում ե հեկեկալ:

— Ինչո՞ւ յես լալիս:

Պատասխանի փոխարեն նա պոկվեց գրկիցս, հանեց
վրայից շապիկը և ցույց տվեց կապտած մեջքը:

— Ծիծէլ են:

Զի պատասխանում: Գլուխը կախ ե գցում, աշխա-
տում ե յերեսիս չնայել, իսկ շրթունքները հազիվ լսելի
ձայնով շնչում են.

— Յուսուփ աղան չի թողնում, վոր գիշերները չեղածում էնք:
մոտ գամ: Ասում ե մի զնա, նրանք Ալլահին չեն հավատում:

Պատմեց Քյարամը, վոր վաղուց, յերբ ինքը յոթ տարեկան եր, մոր դիակը գերեզմանատում տարան, իսկ ինքը Յուսուփի թեյարանը ծառա մտավ: Յուսուփի հաստ ու անշնորհք ըրթունքներից խորամանկ մի ժպիտ կախվեց, իսկ Քյարամն այդ որից ամեն որ լուսածեգին, հենց վոր իմամը բարձրանում է մզկիթի ծայրն՝ առավտայն նամազը կանչելու, յետ և տանում թեյարանի փոքրիկ դռան վրայի յերկաթե նիգերը: Հետո վաղում և աղբյուր, վոր ինքնայենի համար ջուրն անպակաս լինի, զնում է հացի ու լոշերը տախտակի վրա ծալ-ծալ շարած բերում և թեյարան:

Յերբ աղբյուրից ջուր է կրում Քյարամը, տեսնում ե իր հասակի փոքրիկ յերեխաներ, վորոնք գետափին ընկած թափալվում են ավազների մեջ, կամ ջուրն ընկնում լողանում են, անհոգ խաղում: Կանգնում է Քյարամը, զույլերը վար զնում, յերկար, շատ յերկար նայում ե նրանց ու իր աչքերը թրջվում են: Քյարամի սիրաբ նեղվում ե, ուզում ե նստել, լաց լինել, վոր սիրտը հովանա, բայց հենց վոր միտքն ե ընկնում, թե յեռացող ինքնայենի համար ջուր պիտի հասցնի, անիծում ե իր բախտը, առնում ե զույլերը գետնից ու շապում թեյարան: Իսկ կեսորից հետո հաճախորդներով ե լցում թեյարանը և Քյարամը մինչև ուշ յերեկո թեյ բաժանում ու կանչում:

— Եիրին չայ, շիրին չամայ...
Նոր միայն հասկացա, թե ինչու Քյարամը ցերեկ-ները չեր յերեսում ու գալիս եր միայն գիշերները:

* *



Մյուս որը թեյարան գնացի:
Յուսուփը կարձ ու տակառակերպ
մի մարդ եր. նա նստել եր ինք-նայենի յետել, իսկ ինքայենի կողքին կծկված տաքանում եր մի և կատու: Յուսուփի հաստ մատ-ները խաղում եյին թազրեհի հա-տիկների հետ:

— Խեր, շառ...

Գլորվում եյին հատիկներն ու
հատիկների հետ ով գիտե ինչ հա-
շիմներ եյին հանգուցվում Յուսու-
փի ուղեղում: Յերեկի Յուսուփը մը-
տածում եր այն մասին, թե յերբ
իր մեծ զանդուկը փողերով կլցվի, վոր թեյարա-
նը «յերկու աչքանի» դարձնի: Ու յերեկի Յուսուփը
թազրեհի հատիկն ըը գցում եր ու հաշվում, թե որա-
կան բանի հաճախորդ պիտի ունենա և ամեն ո՞ր հա-
ճախորդն որական քանի թեյ պիտի խմի և քանի այդ-

պիսի որեր պիտի անցնեն, վոր զանդուկը լցվի փողերով; Խոկ Քյարամը քաթանի սրբիչն ուսին, թեյով լիքաժակները ձեռքին, մի սեղանից վազում եր մյուսը:

— Շիրին չայ, շիրին չայ, չայ...

Զայնում եր Քյարամն աղմուկի մեջ և ամենքին թեյ եր բաժանում:

Քյարամը տեսավ ինձ ժպտաց: Մոտեցավ ու այնպիսի կարոտով նայեց ինձ, կարծես վաղուց, շատ վաղուց ինձ չեր տեսել: Ուզում եր խոսել, զրուցել հետո, բայց Յուսուփը գոռաց.

— Քյարամ, պարապ մի մաս:

Քյարամը շուռ յեկալ դեպի նա, թել կը պավ սեղանին: Սեղանի վրայից բաժակն ընկալ և ջարդ ու փշուր յեղավ:

Յուսուփը մտրակը ձեռքին դուրս թռավ տեղից, Մտրակի կաշին ծայրն իջավ Քյարամի մեջքին:

— Քոստ,



Մտրակը մեկ ել խալաց ոդի մեջ ու փաթաթվեց Քյարամի բարակ մեջքովը: Քյարամի սիրում մղկտաց ցավից, բայց ձայն չհանեց: Յուսուփը կատաղեց, կարծեց թե իր հարվածները ցավ չեն պատճառում նրան և նա մեկ ել բարձրացրեց մտրակը, վոր զարկի, զարկի այսպես, վոր ցավը մինչև վոսկորներն հասնի ու Քյարամը շան նման ֆլուտա, բայց յես մեջ ընկա և բոնեցի Յուսուփի ձեռքը:

Մեր հայացքներն իրար հանդիպեցին. նա կատաղած նայեց ինձ, նայեց կարմիր վզկապիս ու նրա ատամները կը ճատացին, ուզեց ինչ վոր խոսք ասել, բայց զապեց իրեն ու փնթփնթալով գնաց իր տեղը, իսկ յես ու Քյարամը թողինք թեյարանը և բոնեցինք ձամբարի ճանապարհը:

* *

Եերեկո յեր, սովորական յերեկո, յերբ յերկնքում աստղերը ժպտում են ու մեկ-մեկ մարում: Գիշերն անցնում եր, բոլորը խոր քուն եյին մտել: Միայն յես ու Քյարամն եյինք արթուն: Յերկուսս պահակ եյինք նշանակված: Քյարամը մեզ հետ պետք է զար քաղաք. այդպես եր վորոշել ճամբարը՝ նրա վզին կարմիր փողկապ կապելիս:

Խարույկի կրակը ճարճաթում եր, ծխի մի բարակ շերտ չտապելով բարձրանում եր վեր, իսկ Քյարամի սիրուն աչքերը խորին յերախտագիտությամբ նայում եյին ինձ,

1930 թ.

ՅԵՐԱԶ

Կրակ կտրած արել վաղուց թագնվել եր ամպակոյտերի յետել: Յերեկոյան մութի հետ զովն եր իջել ավազոտ հովտում:

Քարավանը կանգ առափ:

Ապրանքներով ծառնաբեռնված ուղտերը ծունկ իջան: Պարսիկ վաճառականներն ապրանք եյխն տեղափոխում մի քաղաքից մյուսը:

Խարույկի ծուխը բարձրացավ գորշագույն սյան նման: Վաճառականները բոլորեցին ճարճաթող կրակի շուրջը: Միայն տասերկու տարեկան Շարաֆն եր, վոր խարույկից հեռու, իր տիրոջ ուղափ մոտ, պառկել եր քննելու: Հոգնել եր Շարաֆը: Ճանապարհին արեն այրել եր նրան: ճիշտ ե, հոգնած եր, բայց քունը չեր տանում: մի քանի անգամ շուռ յեկավ մի կողքից մյուսը, բայց անողուտ: չքնեց:


Շարաֆը ծնողներ չուներ: Վաղուց մահացել եյխն նրա ծնողներն ու նա չեր հիշում նրանց: Շարաֆին պահում եր Ոմարը, հեռավոր ազգականներից մեկը, Դժգոհ եր Շարաֆը Ոմարից: Ոմարը լավ չեր պահում նրան: Դժգար և Շարաֆի համար Ոմարի ձեռքի տակ

տպրելը: Շատ եր չարչարվում ու շատ տանջվում: Իսկ յեթե մի ձայն հաներ, Ոմարը վոտքերի տակ կձգեր, ու վոսկորի վրա միայն կաշին կմնար:

Սյա բոլորն հիշեց Շարաֆն ու նրա կրակու աչքերից արցունքի տաք հատիկներ գլուխվեցին այտերի վրայով:

Շարաֆը չորս կողմը նայեց, վոչ վոք չկար. բոլորը խարույկն եյխն շրջապատել, իսկ հեռվում պահակն եր կանգնած, հրացանը ձեռքին:

Շարաֆը
գրպանից
հանեց մի
թուղթ.
մաշված
լրագրի



կտորներից մեկն եր այն—Լենինի նկարը վրան։
—Լենին...

Շնչացին նրա շրթունքներն ու մի փոքրիկ ժպիտ
դարդարեց նրա պղնձագույն գեմքը։
—Լենին...

Կրկնեց նա ու խնամքով նկարը ծոցը դրեց, ըն-
կավ կողքին ու ընկղպեց մտածմունքների մեջ։ Շատ
չանցավ, և նա քնեց...

Շարաֆին թվաց, թե ինքը հովտում չե, այլ քա-
ղաքում՝ Ոմարի բակում, ապրանքի հակերն ե կապում։
—Շարաֆ։

Լսվեց մի ձայն զրոխց։ Շարաֆը փողոց թռավ։
Կանչողը Ասկյարն եր—մի ջահել տղա, մոտ քսաներկու
տարեկան։

Ասկյարը Շարաֆին անկյուն տարավ։
—Ուզմում ես Լենինի յերկիրը գնալ։
—Ուզում եմ։
—Ճաշից հետո փողոցում յեղիր։ Լավ։
—Լավ։


Ասկյարը հեռացավ։ Շարաֆը բակ մտավ, շարու-
նակեց գործը։ Զեռքերը հակեր եյին կապում, իսկ
ուղեղը՝ նոր մտքեր։ Ասկյարը Լենինի յերկրում յե-
ղել եր. հիմա յել իրեն կտանի։ Շարաֆն այդ բանում
կասկած չուներ։

Ու այսպես, Շարաֆի գլխում նոր մտքեր եյին
հանգուցվում։

—Շարաֆ,
—լսվեց տի
բոջ ձայնը
տան պա-
տուհանից,
—շտապիր,
յերեկոյան
ճանապարհ
պիտի յենենք։

Շարաֆը ձայն չհանեց, միայն
քթի տակ ժպտաց ու շարունա-
կեց իր գործը։

Կեսորն անցավ։ Արևը թեքվեց։
Մի փողոցից մյուսը ծովեցին
Շարաֆն ու Ասկյարը։ Հասան
նավահանգիստ, նավ նստեցին։ 2
որ ծովով ճանապարհ գնացին։
Հետո յել ընկան մի մեծ քաղաք,
վորին բոլորը Ստամբուլ եյին ա-
սում։ Ելի նավ նստեցին։ Բայց ես
անգամ ծովի վրա շատ որեր անց-



կացրին. ճանապարհը յերկար եր: Վերջը հասան միքաղաք, գնացք նստեցին ու շարունակեցին ճանապարհը:
Հասան Մուկվա. Լենինի յերկիրը:

Թաղաքը մեծ եր: Շատ փողոցներով անցան Շարաֆըն ու Ասկյարը. Շարաֆը բերանը բաց նայում եր չորս կողմ, ու ինքն ել շիմացավ, թե ինչպես Լենինի մոտ հասան: Դռան մոտ պահակ կար կանգնած, չեր թողնում: Ասկյարը թղթեր ցույց տվեց ու յերկուսով ներս մտան: Սովորական սենյակ եր, մաքուր. մի սեղան կար ու շատ գրքեր: Գրքերն այնքան շատ ելին, վոր Շարաֆին թվաց, թե ամբողջ աշխարհի գրքերն եստեղ են հավաքել:

* * *

Սեղանի մոտ մի փոքրիկ մարդ եր նստած, մեծ զլխով: Զնկատեց, զբաղված եր:

— Լենին...

Անվատահությամբ՝ շուրթերը շարժեց Ասկյարը: Լենինը գրուխը բարձրացրեց: Շարաֆին թվաց, թե իր ծոցի նկարը կենդանություն առավ:

— Ո՞հ, Շարաֆ, մեր յերկիրը յեկար,—խոսեց Լենինը, ձեռքը Շարաֆի ուսին դնելով: Շարաֆը զարմացավ, թե վորտեղից գիտեր լենինն իր անունը:

— Պատմիր, ինչ կա ձեր յերկրում.—շեկ բեղերի տակից ժպտալով խոսեց Լենինը:

Վորքան քաղցր եր ու սիրահույզ նրա ձայնը: Շարաֆը

կուզեր, վոր շարունակ Լենինի ձայնը լսի: Շարաֆը պատմեց ամեն ինչ, վոչինչ չթագցրեց:

— Հիմի մեր յերկրում ազատ կլինես, հակեր չես կապի, անապատներում արկից չես այրվի ու կլինես պիոներ, — որից հնչեց Լենինի կարկաչուն ձայնը, և այս անգամ նրա ձյան նման սպիտակ ձեռքերը Շարաֆի այրված պարանոցին կարմիր փողկապակապեցին:

Շարաֆը շամել եր ուրախությունից. չգիտեր ինչ անել:

— Ո՞հ, վորքան բարի յե Լենինը — մտածում եր նա:

Շարաֆը զգաց, վոր մեկն իրեն վոտքով խփեց — շուր յեկալ և ինչ... ինքը պառկած եր ուղտերի մոտ, զիսավերեն ել կանգնած եր տերը՝ Ոմար աղան, իսկ տեսածը յերազ եր, դատարկ յերազ...

— Յել, ճամբա պիտի յենենք, — կրկնեց Ոմարն ու հեռացավ:

Գիշերը մեռնում եր. լուսանում եր:

Թարավանը վոլոր ու մոլոր շարժվեց տեղից: Հովտի մեռելային լուսթյան մեջ տարածվեց ուղտերի պարանոցներից կախ ընկած զանգերի միապաղաղ զողանջը...

1930թ.

Կ Ի Մ Ո Ւ Շ Ը

Կիմուշի թուխ ու սեաչյա դեմքը, խիտ գանգուր-ները պլիսի վրա՝ ինձ վաղոցց ծանոթ են: Յերբ յես այնքան փոքր եյի, վոր մեր փողոցի յերեխաների հետ վեգ եյի խաղում ու տարվելիս ել միշտ լալիս եյի, Կի-մուշը թոթովախոս մի մանուկ եր, վոր հաղիկ եր վոտքերի վրա քայլում:

Խոկ հիմի Կիմուշը մեծացել ե, հասակ ե առել ու պնդացել: Նրա զլիսի գանգուրներն ավելի յեն խտացել, իսկ աչքերը խելոք նայում են այնքան խորունկ, այն-քան խոհուն: Կիմուշը պիհներ ե. Նա կարմիր փողկապ ունի զղին, վոր քամու բերանն ընկնելուն պես ֆոռում ե ու փարփում նրա ուսերին: Կիմուշն այնքան մեծացել ե, վոր վոչ մրայն սահուն կարդալ ու գրել գիտե, այլ և աշխարհագրական քարտեղի վրա հեշտությամբ կդմնի Վոլգա գետը և կպատմի ձեզ Պուդաչովյան խոսվությունը:

Յես ամեն որ Կիմուշին հանդիպում եմ և ամեն որ նրա աչքերը ժպտում են ինձ ու յես այդ ժպտի մեջ տեսնում եմ այն վոգերությունը, վորով բռնկված ե նրա մանուկ հոգին:

* * *

Մի ամբողջ շաբաթ Կիմուշը չերեաց: Ո՞ւր եր գնա-ցել, կամ ինչու փողոց գուրս չեր գալիս, յես չգիտեյի: Վորոշեցի զնալ Կիմուշենց տուն և փարատել իմ մեջ առաջացած կամկածները: Այդպես ել արի: Սենյակ մտա և զարմացած մնացի. Կիմուշը հիվանդ պարկած եր: Նա ինձ տեսնելուն պես ուրախացավ: Պետք ե կարծել, վոր շատ ուրախացավ, քանի վոր շփոթի մեջ ընկապ, մի տեսակ անհարմարություն զգաց, չգիտեր ինչ անել:

Կիմուշի հայրը գրաշար եր, լավ գրաշար՝ փորձված և որինակելի: Բայց մի վատ սովորություն ուներ — սիրում եր կոկորդը թրջել: Ռոճիկ ստացած որն ուշ եր տուն գնում և անպայման հարբած:

— Հայրիկդ ելի խմբւմ ե:

Կիմուշը ժպտաց:

— Վոչ:

Յես զարմացած մնացի: Ականջներիս չեյի ուզում հավատալ: Կիմուշը նկատեց տարակուսանքս և այնպես նայեց ինձ, վորով կարծես թե ասում եր, թե յերկար զատմություն ե:

Յես խնդրեցի պատմել, նա չմերժեց:

— Հայրիկս շարունակ հարբած եր տուն գալիս, ոյսպես սկսեց Կիմուշը, — քանի զնում՝ մեր տան դրու-

թյունը վատանում եր. հայրս իր վաստակած փողերը
զինետուն եր տանում:

Մի անդամ ել, յերբ հայրիկս դարձյալ հարբած
յեկավ, մայրս ել չհամբերեց, փոքքեց հանդիմանել:
Մորս հանդիմանությունը հորս կատաղեցրեց. նա բար-
ձրացրեց բոռնցքը, վոր զարկի, բայց յես մեջ ընկա-
և չթողի: Նա ծիծաղեց վրաս, հեկնեց իմ մանկական
համարձակությունը և ամրող ուժով հրեց ինձ: Յես
պատին կպա: Մայրս ճշալով վագեց իմ կողմէ: Գրկեց
ինձ և ոկսեց շոյել զլուխա: Հայրիկս հանհց բաճկոնակին
ու ընկալ թախտի վրա: Պառկած տեղն անհանդիստ
շարժումներ արեց, ապա նոր քուն մտավ:

Իմ գլուխը ցափում եր և մայրիկս աշխատում եր
իր հորդորներով հանգստացնել ինձ, սակայն ինքն
ավելի յեր հուզվում և նրա արցունքի տաք կաթիլները
մեկ-մեկ ընկնում ելին յերեսիս:

Մյուս որը հայրիկս շուտ տուն յեկավ: Զեր խմել
բայց տրամադրությունը բարձր եր, կատակներ եր
անում և աշխատում եր ուրախացնել մեզ: Յեվ յես
մտածում եյի, թե վորքան լավ կլինի, յեթե հայրիկս
միշտ այդպես լինի ու յերբեք չխմի:

Բայց հայրիկս շարունակում եր խմել:

Իմ ընկերները չգիտեյին, վոր հայրիկս հարբեցող ե:
Միայն այդ հայտնի յեր Միշիկին ու նունիկին, քանի
վոր նրանք իմ մոտ ընկերներն եյին և հաճախ եյին

րիկս եր: Տղաներս այլևս չեյին ծիծաղում, իսկ յես



մեր տանը լինում: Մի
որ պիսներ բազայից
մի խումբ տղաների ու
աղջիկների հետ գուրս
յեկա փողոց: Ճանա-
պարհին մեզ պատա-
հեց մի հարբած մարդ,
վորը ծամածություն-
ներ եր անում, գոսում
եր, յերգում, աղմկում:
Տղաները նայում եյին
նրան ու զվարճանում,
իսկ յես, ահմիջապես
հորս հիշելով, գլուխս
կախ, լուս քայլում եյի,
աշխատելով մասնակից
չմինել ընկերներիս ու-
րախությանը: Հան-
կարծ տղաներից մեկը
գոչեց:

— Տղաներ, սա հոմ
կիմուշի հալրիկն ե:

Զայնը սթափեցրեց
ինձ: Նայեցի հարբածի
կողմը՝ միշտ վոր հալ
րիկս եր: Տղաներս այլևս չեյին ծիծաղում, իսկ յես

կարմրել եյի խեցվետնի նման: Զգիտեյի ինչ անել
Ընկերներս իմացան, վոր հայրս հարբեցող ե: Ամո-
թից թողի և փախա: Ինչքան ել աղաները յետելից
ձայն տվին, կանչեցին, յետ յետ չդպրձա: Տուն հաս-
նելուն պես մառանի մեջ փակվեցի ու յերկար, շատ յեր-
կար լաց յեղա:

Ռոճիկ ստացած որը նա դարձյալ հարբած տուն յե-
կել եմ ձեզ ոգնության կանչելու: Դուք պարտավոր եք
կավ: Յեսն ուզում եյի խոսել, բայց վախենում եյի՝ ոգնել ինձ: Զե՞ վոր գործն ել և տուժում: Այ, որինակի
Զգիտեմ ինչու՝ թվում եր, թե կրարկանա վըսա, իսկհամար, յերեկ հարբած տուն յեկավ, իսկ այսոր գոր-
յեթե ընդդիմանամ, հավանական ե վոտքերի տակ գցիցից բացակայում ե, ուրեմն պարզ ե, վոր տպարանը
ու թակի:

Այդ գիշեր չքննեցի. աշխատում եյի վորեն ճար դտնել

* *

Կիմուշը խոսքն ընդհատեց: Մի քանի սոպե լուս
մնաց և ապա նորից շարունակեց.

— Յենթաղբետվ վոր հայրիկս առավոտը գործի չի-
տոշել եյի ասել, հավաքեցի ինձ և միայն այսունը կա-
դնա, կամ կուշանա, յետ ինքս շտապեցի տպարան և
ներկայացա վարիչին: Վարիչին բացատրեցի գալու
նպատակը և ինդրեցի թույլ տալ ընդմիջումին հորս ցե-
ղեր:

Վարիչը ժպտաց, ուսս թոթվեց, բայց համաձայնեց:
Զանգը հնչեց: Յետ շտապեցի հորս ցեկը: Բարձրա-
սասա և սե տախտակի վըսա գրեցի — «Գրաւր Սի-
ցա փոքրիկ աթոռի վըսա և խնդրեցի չցրվել մի քանի՞նիր հարթեցողության յել պարբերական ուշացումների
ըսպե լսել ինձ: Բանվորներն առանձին հետաքրքրու-
ամար ընկնում ե սեվ տախտակին»:

Թյամբ շրջապատեցին ինձ:

Յես սկսեցի.

— Ընկերներ, իմ անունը կիմուշ ե: Յես ձեր ցելսի
գրաշար Սիմոնի տղան եմ: Հայրիկս միշտ հարբում ե:
Ռոճիկը գինետուն ե տանում, իսկ մենք տանը քաղ-
ցած ենք մնում: Յես կոիվ եմ հայտարարել հարբեցող
հորս գեմ: Յես մենակ վոչինչ տնել չեմ կարող. յետ
իւավ: Յես հետում եյի խոսել, բայց վախենում եյի՝ ոգնել ինձ: Զե՞ վոր գործն ել և տուժում: Այ, որինակի
յեթե ընդդիմանամ, հավանական ե վոտքերի տակ գցիցից բացակայում ե, ուրեմն պարզ ե, վոր տպարանը
ու թակի:

նույնպես վսասվում ե:

— Ճիշտ ե, ճիշտ ե:

Լսվեցին զանազան ձայներ չորս կողմից: Յես զար-
բացած մնացի. վարիչն ամբողջ տպարանն հավաքել եր
միսիս: Հարյուրից ավելի մարդ լսում եր ինձ: Յես շը-
իոթվեցի, մոռացա այն բոլոր խոսքերը, վորոնք վո-
րուսակ ասել, հավաքեցի ինձ և միայն այսօնը կա-

դնացա ձայնել.

— Յես առաջարկում եմ հայրիկիս սե տախտակին

— Համաձայն ենք: Համաձայն ենք,
Կավիճը վերցրի և պճեներիս վըսա կանգնելով

ասա և սե տախտակի վըսա գրեցի — «Գրաւր Սի-
ցա փոքրիկ աթոռի վըսա և խնդրեցի չցրվել մի քանի՞նիր հարթեցողության յել պարբերական ուշացումների
ըսպե լսել ինձ: Բանվորներն առանձին հետաքրքրու-
ամար ընկնում ե սեվ տախտակին»:

Յես տպարանից գուրս յեկա այն ժամանակ, յերբ



հայրիկո ներս
մտավ, ինձ չնկա-
տեց: Յես շտապե-
ցի Միշիկի և նու-
նիկի մոտ: Պատ-
մեցի: Ուրախա-
ցան: Զարմացան:

թե ինչպես սիրու
արի այդպիսի
բան անել: Միտ-
սին յեկանք միլ
տուն: Յես առա-
ջարկեցի պատը
լրագիր լույս ըն-
ծայել և հորս մա-
սին ել գրել: Չա-
ռարկեցին: Անմի
ջապես գործի ան-
ցանք: Թերթի ա-
նունը վորոշեցի
նք «Փարոս» գնիկ

Միշիկը սկսել
նկարել, յես նյու-
թերն եյի խմբա-
գրում, իսկ նունի-
կը պատրաստնոյ

ըթեր մաքուրի յեր առնում: Միշիկը նկարեց հորս՝ լապ-
տերի տակ կանգնած՝ զինու շիշը ձեռքին: Թերթի ճա-
կատին մեծ մեծ տառերով գրեցինք. «Պայման հարեցո-
ղության դեմ»: Կես ժամ հետո լրագիրը պատրաստ եր: Կախեցինք պատին, իսկ մենք գնացինք ողակային պա-
րապմունքի:

Յես տուն գարձա, բայց հայրիկս գեռ չեր յեկել:
Յես թեյ խմեցի և անմիջապես անկողին մտա: Ամբողջ
մարմնով դողում եյի: Վախենում եյի, բայց միենույն
ժամանակ անհամբերությամբ սպասում եյի հորս զա-
լուն: Վոտքերի ձայն լսվեց: Մրտիս զարկերն արագա-
ցան: Դուռը հոռաց և նրա բացվածքում հայրս յերեաց:
Յես վերմակս քաշեցի զլիխս, քնած ձևացաւ: Վերմակի
տակից ծիկրակելով հետևում եյի հորս: Հարբած չեր:
Մոտեցավ սեղանիս, նայեց պատի լրագրին, կարգաց
իր մասին գրածը, քթի տակ ծիծաղեց ու մոտեցավ մահ-
ճակալիս: Զգուշությամբ յետ քաշեց վերմակը, կուցավ
և համբուրեց ինձ: Յես սիրտ առա ու աչքերս բացեցի:
Հորս վղովն ընկա: Հայրս գրկեց ինձ ու պինդ, շատ
պինդ կրծքին սեղմեց: Հայրս անդադար գլուխս շոյում
եր, շփոթվել եր, խոսք չեր գտնում ասելու:

— Հայրիկ, ել չես խմի, այնպես չե՞:

— Չե... չեմ խմի, կիմուշ ջան...

— Խոսք տուր, հայրիկ, խոսք տուր...

— Խոստանում եմ:

— Դե, վոր այդպիս ե, յես ել խոստանում եմ լավ
սովորել:

Այդպիսով մեր մեջ մրցակցության պայմանագիրը
կնքվեց: Յես սովորելու յեմ լավ, առանց թույլերի, իսկ
հայրս չի խմելու, աշխատելու յե առանց պրոՊուլների:
Ուրախությունից քիչ եր մնում արտավելի:

* *

Կիմուշը կը կի՞ն լոեց, բայց այս անգամ չթողեց յեր-
կար սպասել, մի կում ջուր առավ բերանն ու անմիջա-
պես շարունակեց.

— Ահա մի ամիս և հայրիկս չի խմում: Բայց յես
վախեցա, վոր ոսճիկ ստանալու որն ըստ հին սովորու-
թյան գնա կոկորդը թրջելու: Չնայած այդ որն անձրի
եր, սակայն յես տպարան գնացի, բայց ներս չմոտա:
Սպասեցի, մինչև վոր հայրիկս դուրս յեկավ: Նրա հետ
ելի յերկու հոգի կային, վորոնք նրա թեն ընկան ու
նրան տարան: Յես հետևեցի նրանց: Նրանք կանգ ա-
ռան գինետան դռան առաջ: Պարզ եր՝ գնում եյին խմելու:
— Հայրիկ:

Զայն տվի յես:

Նա գարձավ իմ կողմը և զարմացած մնաց, թե յես
վորտեղից բուսեցի:

— Հայրիկ, պայմանագիրը մի մոռանա:

— Յես չեմ գալիս, — գարձավ հայրիկս ընկերներին:
— Ինչո՞ւ:

— Յես կիմուշիս հետ պայմանագիր եմ կապել, վոր
այլես չեմ խմելու:

Նրանք ծիծագեցին հորս վրա և գինետուն մտան,
իսկ յես ու հայրիկս շտապեցինք տուն:

Անձրեկի տակ մնալով՝ մրսեցի ու հիվանդացա: Վո-
չինչ, լավ եմ հիմա, տաքությունս անցել ե, մի քանի
որ հետո բժիշկն իրավունք ե տվել անկողնից յենելու:

* *

Վերջացրեց իր խոսքը կիմուշը և ինձ նայեց: Յես
թոթեցի նրա ուսը, սեղմեցի ձեռքը և նախքան դուրս
գալս մի անգամ ել նայեցի նրա հաղթանակի անսպառ
կորովով լի աչքերին, վորոնք նայում եյին այնքան խո-
րունկ, այնքան խոհուն...

1931թ.

ՀՈՎԻԿԸ

Լավ տղա յեր Հովիկը. հազիվ տաս տարեկան, սիրումն, պղնձագույն գեմքով, աչքերի վճիռ նայվածքը, միամիտ ու մանկական, Բայց են որից, ինչ հայրը՝ ծեր Առաքելը՝ Հովիկին քաղաք բերեց ու խանութի ծառա դարձրեց, Հովիկն ել են չեր, ինչ առաջ, Որերն անցնում եյին ու անցնող որերի հետ մաշվում, հալից ընկնում եր Հովիկը. Հովիկն ամեն առավոտ ավլում, մաքրում եր խանութը, տանից խանութ ճաշ բերում ու կեղոստ ամանները խանութից տուն տանում ու այդպես հազար ու մի բան, մինչեւ վոր որը կմթներ և աղայի հրամանով անկողին կմտներ քնելու: Շատ եր չարչարփում Հովիկը, բայց ով եր նրան նայողը կամ մարդատեղ դնողը: Մեկ-մեկ Հովիկի ուշքն ու միտքը թըռչում եր զյուղ: Հիշում եր գեղի միջով վազող կլկան, պաղ աղբյուրը, գեղի վոսկեհասկ արտն ու արտը: Հովիկը հիշում եր ու յերանի տալիս, մինչեւ աղան կը բամփեր գլուխն կամ կանաչ աչքերը կխօժուեր վրան:

Կիրակի որ եր:

Հովիկը խանութի դրանը կանգնած՝ աչք եր ոպահում, վոր վողացի չարաձճի յերեխաները բան չթոցնին խանութից:

Աղայի աչքն ու ունքը թթված եր:

— Ես արա, Են արա, — գոռում եր աղան, չթողնելով Հովիկին մի քանի բոպի հանգիստ:

Լսվեց թմրուկի ձայն ու համաչափ քայլերի դոփյուն:

— Մեկ, յերկու, յերեք...

— Աջ, ձախ... աջ, ձախ...

Պիոներական մի խումբ անցավ, նրա յետեկց մեկ ուրիշը, հետո մեկն եւ ելի մեկը — բոլորը կարգ-կարգ ու կարմիր վզնոցներով: Հովիկը, խանութն ու աղային մոռացած, շվար նայեց նրանց յետեկց: Հիշեց իրենց գեղի պիոներներին, հետո կոլփարին, վոր տառաց՝ «Քեռ փոքր ես»: Խանութի խորքից լսվեց աղայի բամբ, սթափեցուցիչ ձայնը:

Հովիկը վախից անկյուն կծկվեց, յերկար, յերկար լացեց, բայց նրան ուշք դարձնող չկար, նրան փայփայող ու մխիթարող չկար:

Որը մթնեց, բայց Հովիկի սիրտը դեռ ցավից մըղկլուտում եղ, վոր ինքն ել պիոներ չի:

Գիշերն անցնում եր, բայց Հովիկը գեռ չեր քնել. վլուխը թախտի չոր ծայրին որբած՝ մտածում եր: Յերանի յեր տալիս զյուղում անցկացրած որերին, երը

նա այծի նման թոշկոտում եր սար ու ձոր, ազատ վա-
ղում. ով եր ձեն հանողը կամ արգելողը: Սիրտը բաց
եր կապույտ յերկնքի պես, ուրախ, ինչպես ծառի ճյու-
ղին նատած ծլվող թոշնիկը:

Հովիկի միտքը փայլեց:

— Փախչել, — մտածեց նա: — Լավ, փախչել, համա-
վնց, ճամբա չգիտեմ, բան չգիտեմ... Հովիկը յերկար
մտածեց, շատ յերկար, բայց ուրիշ յեր չգտավ: Վճռեց
փախչել, չորերն ընկնել, միայն թե աղայի ճանկերից
պոկ գար:

Առավոտյան դեմ, արել դեռ չելած, Հովիկը գողե-
ռող գուրս սողաց աղայի տնից: Փողոցում սկսեց փա-
ղել. փախում եր, թե ես և կրոնեն ու նորից յետ կտա-
նեն:

Նա թաղվեց անտառի խորքում, չգիտեր ինչ անել
ու շատ ել հոգնած եր: Պառկեց մի հով ծառի բնի մոտ,
բայց հետո ինչ մտածեց, ինչ չմտածեց, մագլցեց ծա-
ռերից մեկի վրա և նրա հաստ ճյուղի վրա պառկեց
հանգստանալու: Քունը փակեց նրա աչքերը: Չանցած
կես ժամ՝ Հովիկի ականջին խառը խոսակցության, վոտ-
քերի ձայն, ծիծաղ ու աղմուկ հասավ:

— Յերկի աղան ե, յեկել ե յետ տանելու, — մտածեց
ու փախից ամուր փակեց աչքերն ու կծկվեց ծառի վրա:
Աղմուկը շարունակվեց:

Սակայն մի ըստե չանցած՝ նա լսեց խմբական յերգի
ձայն. յերգի խոսքերն ու յեղանակը ծանոթ ելին,



բայց յերբ և վարտեղ եր լսել, այդ չեր կարողանում
մտաբերել: Հիշեց: Գյուղի պիտոներներն ելին յերգում:

Հովիկը սիրտ առավ ու աչքերը բացեց:

Ծառի տակ ծխում եր պիտոներներով շրջապտտված
խարույկը: Խարույկի ծուխն ու պիտոներների յերգը

միախառնված բարձրանում եյին վեր և խախտում անտափ լոռությունը:

Հովհակը ծառից ցած իջավ: Պիոներները շրջապատեցին նրան. Հովհակը պատմեց նրանց իր գլխին յեկածը, գյուղից քաղաք գալն ու ազայի մասին: Պիոներները վճռեցին Հովհակին իրենց հետ վերցնել:

Հովհակն անձրեստ աշունն ու ձյունոտ ձմեռը պիոներների մոտ անցկացրեց քաղաքում: Նա այդ ժամանակամիջոցում շատ փոխվեց: Սովորեց զրել, կարդալ ու հասկանալ կյանքը: Պիոներները շատ եյին սիրում Հովհակին, Հովհակն ել նրանց:

Մայիսյան զով յերեկո յեր:

Ամբողջ գյուղը հավաքվել եր ակումբ: Քաղաքից պիոներներ եյին յեկել ու իրենց հետ Առաքելենց Հովհակին ըերել:

Հանդեսն սկսվեց: Վարագույրը բացվեց: Բեմի վրա, կարմիր կտավով ծածկված սեղանի շուրջը, մոտ հինգ հոգի եյին նստել: Իսկ մեջտեղ՝ նախագահի տեղը՝ զրավիլ եր Հովհակը: Հովհակը ծեռքի զանգը շարժեց, հանդեսը բացեց ու խոսք տվեց քաղաքից յեկած պիոներների կոլվարին: Կոլվարը խոսեց կազի մասին ու ազա պատմեց, թե ինչպես աշնանը եքսկուրսիայի ժամանակ գտան Հովհակին:

Դահլիճը ծափերով լցվեց:

Հովհակը պատմեց քաղաքի ազայի մասին ու ասաց, վոր եղագահի մարդիկ գեղումն եւ առ կան. նրանք մեր թշնամին են, պիտք ե կովի, ոյ դեմ:

Ծեր Առաքելը, վոր հւայած եր դահլիճում, ուրախությունից չգիտեր ինչ ասել: Մեկ գլուխը կախ հիշում եր են Հովհակին, վորի ծեռքից բռնած տանում եր քաղաք, մեկ ել նայում եր թեմ՝ ժողովը վարող խելոք Հովհակին:

Ծեր Առաքելի գեմքը, վոր գորշ եր ու աղբյուրի փոշոտ ճամբայի գույնն ուներ, թրջվեց աչքերից գլորվող յերկու խոշոր արցունքի կաթիլներով:

1929թ.

Ժողովը վերջացրինք: Ըսկերներս մոտիկ եյին ապրում,
իսկ յես հեռու: Մեն-մենակ բավական ճանապարհ ունե-
յի գնալու:

Դյուզը քուն մոտած մրափում եր: Զայն, ծպտուն
չեր լսվում, միայն քամուց որորվող բարդիների տե-
րեներն եյին խշալով աղմկուժ: Անցել եյի մեկ փողոց,
են և ուղում եյի ծովել մյուսը, վոր մոտակա տներից
մեկում ականջիս ձայների շառակներ հասան: Մթության
մէջ հագիվ ջոկեցի Ծատուրանց տունը: Զայներն այն-
տեղից եյին լսվում: Հետաքրքրությունս շարժվեց:
Մոտեցա չթածածկ պատուհանին: Վոչինչ չեր յերկում:
Վերջը մի գորդիկ արանք գտա: Նայեցի: տեսնեմ,
թախտի վրա, գունավոր մինդարներին, ծալապատիկ
նստել եյին Ծատուրն ու Սարիբեզը: Ես յերկուսն ել
կուլակներ եյին: Նրանցից մի քայլ հեռու, սեղանի մի
ափին, նստել եր նախկին սուղիա՝ Արշակը, մյուս
ափին ել՝ Տեր-Ծարուքը:

— Պետք ա զբա գլխին ոյին խաղաք մել ել տե-
սար մեզ ել կաղեթ զցեց, են վախտն արի ու եշը ցե-
խից հանի, — խոսեց Ծատուրը, լիք թշերն ավելի ուղց-
նելով ու յերկար բեղերի ծայրերը վոլորելով:

— Աղա, Ալեքը հիշեմ չեք ինչ եր, փոխքոտ հո-
տաղ, ով եր նրան մարդ անդըր իսկ հիմի ինչ գնաց
կարմիր բանակ, թագա շքեր հագավ, գրածանաչ դաշ-
ուավ... — խոսեց Տեր-Ծարուքը:

— Հա, ե... եղ ասա, ե... մաղմացրեց աչքերը նախու-
կին սուղիա՝ Արշակը:

ԽԱՐՈՒՅԿԻ ՄՈՏ

Ամարային պարզկա գիշեր եր:
Պիոներական ճամբարը քուն եր մաել: Բազմաթիվ
յիր ու ցան յեղած աստղերի արանքից ժպտում եր
վոսկելույս լուսինը:

Ճամբարի մոտ խարույկ եր վասվում: Խարույկի ծուխը
վոլորվելով բարձրանում ու ձուլվում եր յերեկոյան գորշ
խավարին: Խարույկի շուրջը բոլորել եյին Միխակն ու
Հովհելը: Նրանք գիշերային պահակներ եյին: Վորպես-
դի գիշերն անցնի, նրանք պատմում եյին իրենց
կյանքից այս կամ այն դեպքը:

Միխակը վերջացրել եր, հերթը Հովհելինն եր:

**

— «Մութ գիշեր եր, — այսպես սկսեց նա իր պատմու-
թյունը, — լուսինը վաղուց թագնվել եր լեռների թիկուն-
քում: Ամբողջ գյուղը վաղուց արդեն քննել եր, վոր մենք

Լեզուս կծեցի: Ալեքը մեր գեղխորհըդի նախագահն եր: Ես վոր իմացա, վազեցի Ալեքի մոտ: Քսած եր. արթնացրի: Ամեն ինչ պատմեցի: Նա ժպտաց, համբուրեց ճակատս և ասաց, վոր հանգիստ գնամ քնելու:

* *

Անցավ մի շաբաթ:

Ալեքն իրիկնապահին քաղաքի ճանապարհը բռնեց: Հենց եղ գիշեր, Ալեքի գնալուց հետո, Ծատուրանց տան մոտով անցնելիս վոտքերի ճայն լսեցի: Յես կըծկվեցի պատի տակ, աթարի գեղերի կողքին: Ծատուրանց դուռը ճոռաց, դուրս յեկան ինքը՝ Ծատուրը, մեկ ել Սարիբեղը: Չորս կողմը մութ խավար եր: Ինձ չտեսան: — Ալեքը ճանապարհի կեսը կտրած կլինի: Շուտ ձիյերը...

— Թող կտրի, ճամբի կեսին ել մենք իրեն կկրտրենք... արյունթաթախ գետին կփոենք... այ, են վախտը թող ինձ կազեթ գցի, — քմծիծաղ տալով վերջացրեց իր խոսքը Ծատուրը:

— Հա, ե.., եղ ասա, ե... — դուան արանքից լսվեց Արշակի նվազ ձայնը:

Մի քիչ հետո յերկու ձի առաջ վազեցին, իրենց հետ տանելով Ծատուրին ու Սարիբեղին:

Ես թուա բջջի քարտուղարի մոտ: Հետո վազեցի գեղխոհրդի դոմը — ձիյերի հետևից: Մեր ձիյերը ճանա-

պարհ լնկան, իրենց հետևից բարձրացնելով գորշ վորշի: Մեր բախտից ամպերի արանքից լուսինն յերևաց: Հինգ հոգի եյինք: Արագացրինք ձիյերի վազքը, Հասանք տեղ: Ալեքին գետին գցած խեղդում եյին Ծատուրն ու Սարիբեղը: Մենք վրա հասանք: Ոկավեց կոփվը: Մի հինգ



զըսպ հետո՝ յերկու չարագործները կապկապած, զլուխ-
ները կախ, քայլում եյին հետ — դեպի գյուղ։ Զմռան
մութ գիշերից ավելի մասյլ եյին նրանց դեմքերը։
Նրանց հետուից հանգիստ, համաշափ գոփյուններով
մեր ձիյերն եյին առաջանում։

Յերկրորդ որը ամբողջ գյուղը հավաքվեց ակսամբ։
Դատում ելին Ծատուրին, Սարիբեզին, Նախկին սուրբա
Արշակին ու *Տեր-Մարութին»*։

* * *

Լուսինն արդեն մայր եր մտել, իսկ խարռույկը դեռ շարունակում եր ծխել, յերբ Հովհանն վերջացրեց իր պատմությունը:



«Ազգային գրադարան»



NL0331517

29496

ԳԻՒԾ ՌԱԴԻԲ.

ԳՈ

„ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ“ - ի գրադարան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Մ. Պետրովան — «Պիռները հնդամյակում»;
2. Ո. Զարյան — «Թեյարանի տղան»;
3. Մ. Դարբինյան — «Վասկե թելեր»;

1934/193

Рубен Зарьян

„Мальчик из чайной“

Сахелгами

1932